ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2020 թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը:

1. Համայնք Գետամեջ 2-րդ փողոց թիվ 18 հասցեում վարձակալության իրավունքով տրամադրված հողամասի նկատմամբ գնման նախապատվության իրավունք տալու, ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2020 թվականի N 20-Ա

ՀԱՄԱՅՆՔ ԳԵՏԱՄԵՋ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և քաղաքացի Էդվարդ Տոնիկի Ղազարյանի դիմումը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի սեփականություն հանդիսացող՝ քաղաքացի Էդվարդ Տոնիկի Ղազարյանին վարձակալությամբ տրված (վարձակալության վկայական N 0071231), 07-025-0202-0001-ից ծածկագրի տակ գտնվող 0,03 հեկտար բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Էդվարդ Տոնիկի Ղազարյանին՝ կադաստրային արժեքի չափով, որը կազմում է 372 600 (երեք հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր) դրամ:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 2-ի «Հողի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N 18-Ա որոշման 2-րդ կետի համաձայն քաղաքացի Էդվարդ Ղազարյանն արդեն իսկ վճարել է սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքների տարբերությունը, ուստի գնման

նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով նշված հողամասը վերջինիս օտարելու համար առաջարկվում է վճարել նաև վճարած արժեքի տարբերությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդվարդ Ղազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 22

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջների՝ *ավագանին որոշում է.*

Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 7 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 55-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասերն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 23-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների՝ *ավագանին որոշում է.*

1. Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Պտղնի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 55-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հատված 6-ի 3112 տողի 11 բաժին 1 խումբ 2 դաս «4891 ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» տողի «1623.0» թիվը փոխարինել «0.0» թվով:

2) հատված 6-ի 2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «4112 Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» տողի «1600.0» թիվը փոխարինել «3223.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 24

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջների, հաշվի առնելով կից սեփականատերերի փաստացի օգտագործությունը և այն հանգամանքը, որ օտարվող հողամասերը հնարավոր չէ օտարել որպես առանձին միավոր առուրդային կարգով՝ *ավագանին որոշում է.*

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգեզանգված 5-րդ թաղամաս թիվ 2 հասցեում գտնվող 0.004447 հա (սեփականության վկայական N 08052020-07-0085, ծածկագիր 07-054-0203-0091) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարել կից հողամասի (կադաստրային ծածկագիր 07-054-0203-0070) սեփականատեր Մարինե Ռազմիկի Մաիլյանին (անձնագիր BA0622515, տրված 04.06.2014թ.) 250 000 ՀՀ դրամով:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2/2 հասցեում գտնվող 0.0098 հա (սեփականության վկայական N 14052020-07-0032, ծածկագիր 07-054-0036-0027) բնակավայրերի նշանակության այլ հողատեսքը ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարել կից հողամասի (կադաստրային ծածկագիր 07-054-0036-0001) սեփականատեր Սիլվերիա Պադիլլային (Հաշվառված ՀՀ ք. Երևան Նորք 1 նրբանցք տուն 4 հասցեում, Հայաստանի Հանրապետության կացության քարտ AH0000665, տրված 29.05.2019թ.) 445 000 ՀՀ դրամով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻՋԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 25

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 13-ի ««Հողաչափ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Պտղնի համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեման հաստատելու մասին» N 5 որոշումը՝ *ավագանին որոշում է.*

1. Կոտայքի մարզի Պտղնի համայնքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող (սեփականության վկայական N 19042012-07-0132, կադաստրային ծածկագիր 07-054-0332-0020) 1.443 հա ջրային հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի նշանակության ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման, համաձայն համայնքի գոտիավորման և օգտագործման սխեմայի:
2. Նշված փոփոխությունները ներառել համայնքի հողերի ընթացիկ տարվա հաշվեկշռում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐԶԱՆԻԿ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ